ՀՈԴՎԱԾՆԵՐ СТАТЬИ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Մ. ՀԱԿՈԲՅԱՆ

Եվրոպայի զգալի մասը նվաճելուց հետո ֆաշիստական Գերմանիան 1941 թ. հունիսի 22-ին ուխտադրուժ կերպով իր հզոր ռազմական մեքենան ուղղեց Սովետական Միության դեմ՝ նպատակ ունենալով ջախջախել Սովետական Միությունը, ստրկացնել և ոչնչացնել նրա ժողովուրդներին։

Ֆաշիստական բանակի հարձակումը Սովետական Միության վրա դաժան փորձություն էր մեր բազմազգ սոցիալիստական հայրենիքի, նրա ժողովրդի համար։ Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ղեկավարությամբ սովետական ժողովուրդը, նրա հերոսական կարմիր բանակը ոտքի ելան կատաղի և նենգ թշնամու դեմ։ Սկսվեց Սովետական Միության հայրենական մեծ պատերազմը։ Խնդիր դրվեց կանգնեցնել թշնամու առաջխաղացումը, ետ մղել նրան, ոչնչացնել ֆաշիստական Գերմանիան, եղբայրական օգնության ձեռք մեկնել ֆաշիզմի լծի տակ հեծող եվրոպական ժողովուրդներին։ Դա ազատագրական պատերազմ էր ֆաշիստական ագրեսիայի դեմ, պատերազմ, որը մեծ աջակցություն գտավ հակաֆաշիստական բոլոր ուժերի կողմից ամբողջ աշխարհում։

Դեռևս պատերազմի առաջին օրերին՝ 1941 թ. հունիսի 29-ին, ՍՍՀՄ Ժողկոմխորհը և Համկ(բ)կ Կենտկոմը ընդունեցին դիրեկտիվներ թշնամու դեմ պայքարը ծավալելու համար։ Այդ փաստաթղթերում սովետական ժողովրդին ու նրա զինված ուժերին կոչ էր արվում գիտակցել վտանգի ամբողջ խորությունը, ամբողջ աշխատանքը վերակառուցել ռազմական ձևով, կազմակերպել համակողմանի օգնություն ռազմաճակատին, ամեն կերպ ավելացնել զենքի, ռազմամթերքների, տանկերի, ինքնաթիռների արտադրությունը... ցուցաբերել կազմակերպվածություն, կարգապահություն ու տոկունություն։ Նշված էին թշնամու թիկունքում մնացած մեր մարդկանց ընդհատակյա աշխատանքի ու պարտիզանական շարժման կոնկրետ խնդիրները։

Հաջորդ օրը՝ հունիսի 30-ին կուսակցության Կենտրոնական կոմիտեի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և Ժողկոմխորհի համատեղ որոշմամբ ստեղծվեց արտակարգ մարմին՝ Պաշտպանության պետական կոմիտե, որի ձեռքում կենտրոնացվեցին պետական, ռազմական և տնտեսական ղեկավարությունն ամբողջ երկրում։

Խիստ ծանր էր մեր երկրի վիճակը պատերազմի առաջին շրջանում՝ 1941—1942 թթ.։ Մեր սահմանների վրա հարձակվել էին ժամանակակից տեխնիկայով զինված և պատերազմի փորձ ունեցող 190 դիվիզիա, որից 153-ը գերմանական էին, մյուսները՝ նրա սատելիտների՝ Իտալիայի, Ռումինիայի, Հունգարիայի և Ֆինլանդիայի։

Սովետական կառավարությունը և նրա ժողովուրդը վճռական միջոցներ ձեռք առան թշնամուն հակահարված տալու համար։ 1939 թ. համեմատությամբ 1941 թ. կարմիր բանակի զինվորների թիվը ավելացվեց երեք անգամ, իսկ հետագա տարիներին այն ավելի աճեց։ Կարմիր բանակն սկսեց ապահովվել ռազմական նոր տեխնիկայով, զենքով, զինամթերքով։ Երկրի արևելյան շրջաններում կառուցվում էին նորանոր ռազմական գործարաններ, որոնց զգալի մասի սարքավորումները նախօրոք փոխադրվել էին թշնամու գավթած մարզերից։

Թիկունքում ծավալած իրենց նվիրական աշխատանքով ռուս մեծ ժողովուրդը և մեր մեծ հայրենիքի բոլոր ազգերն ու ժողովուրդները ամեն ինչ անում էին ռազմաճակատին օգնելու, հաղթանակը կոփելու համար։

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրերից Սովետական Միության բոլոր ազգերն ու ժողովուրդները համախմբվեցին կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության շուրջը։ Պատերազմի ծանրությունն իր ուսերի վրա տանող ռուս մեծ ժողովրդի գլխավորությամբ նրանք հերոսաբար կանգնեցին նենգ թշնամու դեմ՝ կրծքով պաշտպանելով սրբազան հայրենիքը։ Ֆաշիզմի դեմ մղվող պայքարը վերածվեց համաժողովրդական պայքարի։ Սովետական բոլոր մեծ ու փոքր ազգերը, բոլոր ժողովուրդները ցուցաբերեցին պատմության մեջ չտեսնված համաժողովրդական շահերի պաշտպանություն։ Ֆաշիստական հորդաների դեմ մղվող դաժան պայքարում նրանք հերոսաբար պաշտպանեցին ոչ միայն իրենց, առանձին վերցրած, ազգային ազատությունն ու անկախությունը, այլև ամբողջ Սովետական Միության, նրա բոլոր ազգերի ու ժողովուրդների ազատությունն ու անկախությունը, նրանց նվիրական աշխատանքի ու պայքարի պտուղները։

Պատերազմի տարիներին ավելի ու ավելի վառ դրսևորվեց սովետական հայրենասիրությունը, որը սովետական մարդկանց նորանոր սխրանքների էր կոչում։ Թշնամու դեմ հերոսաբար մարտնչող կարմիր բանակի շարքերը համալրվեցին սովետական բոլոր ազգերի ու ժողովուրդների զավակներով։ Ձևավորվեցին բազմաթիվ նոր բանակներ։ Սովետական կառավարության որոշմամբ ստեղծվեցին ազգային զորամիավորումներ, ուր ռազմական ու քաղաքական ուսուցումը տարվում էր ազգային լեզվով։

1941—1942 թթ. ձևավորվեցին վրացական, ադրբեջանական, հայկական, բաշկիրական, էստոնական, լատիշական, լիտվական, ղազախական և այլ ազգային դիվիզիաներ, որոնք սեղմ ժամկետում յուրացնելով ռազմաքաղաքական ուսուցման հատուկ ծրագիրը, մեկնեցին ռազմաճակատ։ Բացի դրանից, ազգային սովետական հանրապետություններն իրենց զավակներով համալրեցին նաև կարմիր բանակի ընդհանուր միութենական զորամիավորումները։ Ամբողջ բանակում իշխում էր ժողովուրդների լենինյան եղբայրական բարեկամությունը։ Նույնն էր նաև թիկունքում։

Թշնամու դեմ մղված մարտերում ցուցաբերած իր սխրանքներով ամբողջ երկրում հայտնի էր լատիշական 43-րդ դիվիզիան։ Նա 1941 թ. դեկտեմբերից մինչև 1943 թ. հունիսը ոչնչացրեց 18291 ֆաշիստական զինվոր ու սպա, 24 հրանոթային ու ականանետային մարտկոց, 10 տանկ և այլ տեխնիկա։ Իր մարտական դրոշը փառքով պսակեց բաշկիրական 16-րդ գվարդիական հեծյալ դիվիզիան։ Կարմիր բանակի մյուս զորամիավորումների շարքում նա հաջողությամբ անցավ Սնով և Դեսնա գետերը, մասնակցեց մի շարք քաղաքների ու գյուղերի ազատագրմանը։ Միայն այդ մարտերում դիվիզիայի 1408 ռազմիկներ պարգևատրվեցին կառավարական շքանշաններով և մեդալներով։ Թշնամու դեմ հերոսաբար էին կռվում նաև մյուս ազգային դիվիզիաները։

Պատերազմի դաշտում մեծ չափով աճեցին զինվորական ամեն կարգի մասնագետները, այդ թվում ազգային կադրերը։ Դա երևում է հետևյալ թվերից. 1943 թ. վերջին կարմիր բանակի ռազմաօդային ուժերում, բացի ռուսներից, կային 28 հազար ուկրաինացի, 5305 բելոռուս, 1079 հայ, 1041 թաթար, 800 վոգի և մյուս ազգերի ներկայացուցիչներ։ Զրահատանկային և մեքենայացված զորքերի կազմում կար՝ 14136 ուկրաինացի, 2490 բելոռուս, 850 թաթար, 106 ադրբեջանցի և այլն[1]։

Կարմիր բանակի ինտերնացիոնալ բնույթը ցայտուն կերպով արտահայտվում է նաև նրա ռազմաճակատների հրամանատարների կազմով։ 1944 թ. ամռանը ֆաշիստական զորքերի խոշոր խմբավորումը Բելոռուսիայում գլխովին չախջախվեց մեր չորս ռազմաճակատների՝ առաջին, երկրորդ և երրորդ բելո-

[1] История Великой Отечественной войны Советского Союза. 1941—1945. Т. III, М., 1964, с. 220.

ռուսական և առաջին Մերձբալթյան ռազմաճակատների զորքերի կողմից։ Նրանց հրամանատարներն էին, համապատասխանաբար, ռուս ժողովրդի զավակ Դ. Ֆ. Յուխարովը, լեհ ժողովրդի զավակ Կ. Կ. Ռոկոսովսկին, ուկրաինական ժողովրդի զավակ Ի. Դ. Չեռնյախովսկին և հայ ժողովրդի զավակ Հ. Ք. Բաղրամյանը։

Թշնամու դեմ մղվող համաժողովրդական պայքարին ակտիվ մասնակցություն ցուցաբերեց նաև հայ ժողովուրդը։ Նա ռազմաճակատ ուղարկեց ավելի քան կես միլիոն իր զավակներին և պատվիրան տվեց տուն վերադառնալ միայն հաղթանակով։ Ստեղծվեցին հայկական ազգային հինգ դիվիզիաներ։ Ռազմաճակատին օգնելու համար թիկունքում նվիրական և անդուլ աշխատանք էին ծավալել սովետական Հայաստանի բանվոր դասակարգը, կոլտնտեսային գյուղացիությունը և մտավորականությունը, բոլոր աշխատավորները։

Հայ ժողովուրդը սրտառուչ նամակ ուղարկեց ռազմաճակատում գտնվող իր զավակներին։ Այնտեղ ասված էր.

«Մեր զավակնե՛ր, կարմիր բանակի մարտիկներ.

Մենք մեծագույն խանդավառությամբ հետևում ենք ձեր պայքարին։ Եղեք ձեր ժողովրդին արժանի, մեր զավակներ։ Սկսված գործը մինչև վերջ հասցրեք, մինչև վերջ ջարդեցեք ու մեր հողից դուրս շպրտեցեք գերմանական գազրելի հրեշին։

Մ՛ի մի ոսպե մի՛ մոռացեք, որ հիտլերյան արյունարբու բորենու դեմ մղվող պատերազմում վճռվում է Սովետական Միության բախտը, հայ ժողովրդի բախտը։ Բազմապատկեցեք ձեր զենքի ուժը, է՛լ ավելի կոփեցեք ձեր սրտերը։ Կանգ մի առեք ոչ մի դժվարության առաջ, քարուքանդ արեք ֆաշիստական ամրությունները, ոչնչացրեք նրանց տեխնիկան ու կենդանի ուժը։ Անընդհատ շարժվեցե՛ք դեպի Առնմուտք։

...Ձեզ են սպասում, իբրև ազատարարների, մեր միլիոնավոր քույրերն ու եղբայրները, որոնք տառապում են գերմանական զավթիչների ծանր լծի տակ. Հիշեցեք, որ ձեր սրբազան պարտքն է նրանց ազատելը»[2]։

Կարմիր բանակի մարտակարգերում գտնվող հայկական 390-րդ, 408-րդ, 89-րդ, 409-րդ և 76-րդ (հետագայում 51-րդ գվարդիական) դիվիզիաները ֆաշիստական հորդաների դեմ ծանր ու հերոսական պայքար էին մղում։ Հարյուր հազարավոր հայազգի զինվորներ թշնամու դեմ մարտնչում էին կարմիր բանակի մյուս զորամասերում։ Նրանք բոլորն էլ պատվով կատարեցին հայ ժողովրդի պատվիրանը, նրանցից շատերը զոհվեցին հաղթանակի ճանապարհին։

* * *

Պատերազմի առաջին շրջանում կարմիր բանակը, ակտիվ պաշտպանական մարտեր մղելով, թշնամուն մարդկային և ռազմական տեխնիկայի մեծ վնասներ պատճառելով, ետ էր քաշվում։ Ֆաշիստական բանակը զավթել էր Բելոռուսիան, Ուկրաինան, Լիտվան, Լատվիան, Էստոնիան, ՌՍՖՍՀ մի շարք մարզերը։ Լենինգրադը գտնվում էր պաշարման մեջ։

1941 թ. վերջերին թշնամին մեծ հարձակում ծավալեց Մոսկվայի վրա։ Այս ուղղությամբ նա գործողության մեջ էր դրել 77 ընտիր դիվիզիա, որից 23-ը տանկային և մոտորացված դիվիզիաներ էին։ Հիտլերը նպատակ էր դրել այդ հարձակումով զավթել մայրաքաղաքը և հասնել հաղթանակի։

Թշնամու դրոհի դեմ աննկուն կանգնեցին Մոսկվան պաշտպանող մեր զորքերը։ Ոտքի ելավ ամբողջ բնակչությունը։ Հոկտեմբերի 19-ին մայրաքաղաքը հայտարարվեց պաշարողական դրության մեջ։ Կազմակերպվեց 12 աշխարհազորային դիվիզիա, որոնց անձնակազմի կեսը կոմունիստներ էին։ Մոսկվայի պաշտպաններին օգնության եկան թիկունքի զորամասերը։ Սկսվեց վիթխարի ճակատամարտը։

Թշնամու առաջին հարձակումը կանգնեցվեց, բայց վտանգը դեռ մնում էր։

---

2 «Սովետական Հայաստան» օրաթերթ, 2 մարտի 1943։

Նոյեմբերի վերջերին սկսվեց հակառակորդի նոր հարձակումը, որը ոչ միայն կանգնեցվեց, այլև դեկտեմբերի սկզբին սկսվեց կարմիր բանակի հակահարձակումը։ Հետապնդելով ֆաշիստական ջախջախված դիվիզիաների մնացորդներին, մեր զորքերը ռազմաճակատի գիծը զգալի չափով հեռացրին Մոսկվայից, խոշոր պարտության մատնեցին թշնամուն։ Դա ֆաշիստական բանակի առաջին խոշոր պարտությունն էր երկրորդ համաշխարհային պատերազմում։ Առաջ շարժվելով դեպի արևմուտք, 1942 թ. փետրվարին մեր զորքերը անցել էին ավելի քան 400 կիլոմետր։ Մոսկվայի տակ և մյուս ռազմաճակատներում այդ ժամանակ կարմիր բանակի ձեռք բերած հաղթանակը վերջնականապես վիժեցրեց «կայծակնային պատերազմի» ֆաշիստական պլանը։ Այդ պատմական հաղթանակը հանդիսացավ արմատական շրջադարձի սկիզբը Հայրենական մեծ պատերազմում։ Միաժամանակ այն ունեցավ ռազմաքաղաքական ու միջազգային մեծ նշանակություն։ Սնանկ դուրս եկան ֆաշիստների հաշիվները սովետական հասարակական ու պետական կարգի, թիկունքի անկայունության մասին։

Սակայն թշնամին դեռ հզոր էր և մեր բանակի դեմ նորանոր խոշոր հարձակումների պլաններ էր մշակում ու իրագործում։ 1942 թ. հունիսի վերջերին զորքերի մեծ խմբավորումով, հատկապես 6-րդ ընտիր բանակով, նա հարձակում սկսեց Վորոնեժի ուղղությամբ։ Այստեղ գործող մեր զորքերի ուժեղ դիմադրության շնորհիվ սկզբում թշնամուն չհաջողվեց առաջ շարժվել։ Ֆաշիստական հրամանատարությունն այստեղ կենտրոնացրեց նոր ուժեր՝ ավելի քան 50 դիվիզիա՝ մեկ միլիոնից ավելի զինվոր և մեծ քանակությամբ տանկային ու մեքենայացված զորքեր։ Նույն թվականի ամռանը սկսելով նոր հարձակումը, թշնամին ճեղքեց մեր ռազմաճակատի գիծը, առաջ շարժվեց դեպի հարավ-արևելք՝ Ստալինգրադ։ Նպատակն էր գրավել այդ քաղաքը և հարվածի ուղղությունը փոխել դեպի հյուսիս՝ Մոսկվան շրջանցելու համար։ Մյուս կողմից, նրա զորքերի մի խմբավորումը առաջ էր շարժվում դեպի Հյուսիսային Կովկաս և Անդրկովկաս՝ տիրանալու դրանց և ճանապարհ բաց անելու դեպի Հնդկաստան։

Գրավելով զգալի տերիտորիա, ֆաշիստական բանակը մոտեցել էր Ստալինգրադին։ Սեպտեմբերին մարտերը արդեն ծավալվեցին քաղաքում։ Կարմիր բանակին հերոսաբար օգնում էին Ստալինգրադի ու նրա մարզի 150 հազար աշխատավորներ։ Այդ պայմաններում էլ չէր դադարել քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների աշխատանքը։ Նրանք մատնչող բանակին ռազմամթերք ու զենք էին մատակարարում։ Ֆաշիստների դեմ անկուն մարտեր էին մղում գեներալ Վ. Ի. Չույկովի 62-րդ և գեներալ Մ. Ս. Շումիլովի 64-րդ բանակները, մյուս զորամիավորումները։

Այդ օրերին ուժեղ մարտեր էին գնում նաև Կովկասի համար, Ռժևի, Վելիկիե Լուկիի շրջաններում և Լենինգրադի մոտ։ Շարունակվում էր դժվարին վիճակը մեր հայրենիքի համար։ Եթե նկատի ունենանք նաև այն, որ Ստալինգրադի անկումից հետո ՍՍՀՄ-ի վրա պետք է հարձակվեին նաև միլիտարիստական Ճապոնիան և Գերմանիային հարող Թուրքիան, ավելի պարզ կլինի այդ վտանգի մեծությունը։

Սակայն այդ վճռական մարտերում հիտլերյան հրամանատարության պլանները հիմնովին խորտակվեցին։ 1942 թ. նոյեմբերի 19-ին մեր Հարավ-արևմտյան և Դոնի ռազմաճակատների զորքերը անցան հարձակման։ Կոտրելով հակառակորդի կատաղի դիմադրությունը, մեր զորքերը շուտով շրջապատեցին նրա 22 ընտիր դիվիզիաները։ Սկսվեցին դրանց գլխովին ոչնչացման հերոսամարտերը, որոնք հաղթականորեն ավարտվեցին 1943 թ. փետրվարի սկզբին։ Ֆաշիստական գլխավոր հրամանատարության բոլոր ջանքերը՝ փրկելու շրջապատման մեջ առնված 330 հազարանոց զորքը՝ 6-րդ բանակը և մյուս դիվիզիաները, ապարդյուն անցան։ Նրանք գլխովին ջախջախվեցին։ Գերի վերցվեց 90 հազարից ավելի զինվոր և սպա, դրանց թվում 24 գեներալ։ Ոչնչացվեց ու որպես ավար վերցվեց հակառակորդի հսկայական քանակությամբ ռազմական տեխնիկա՝ տանկեր, հրանոթներ, ինքնաթիռներ և այլն։

Մոսկվայի ճակատամարտից հետո դա Սովետական Միության նոր խոշոր-ագույն ռազմաքաղաքական հաղթանակն էր ֆաշիստական ուժերի դեմ, հաղթանակ, որով արմատական բեկում սկսվեց Հայրենական մեծ պատերազմում և ամբողջ երկրորդ համաշխարհային պատերազմում։ Ավելի բարձրացավ Սովետական Միության միջազգային հեղինակությունը, ուժեղացավ նրա հերոսական կարմիր բանակի հարձակողական թափը, նոր խանդավառություն առաջացավ թիկունքի աշխատանքներում։ Ավելի ու ավելի ծավալուն դարձավ թիկունքի բազմապիսի օգնությունը ռազմաճակատին։ Խորխլվեց ու սրվեց ֆաշիստական պետության ու նրա զինված ուժերի ներքին դրությունը, բարդացավ նրա դաշնակիցների վիճակը, Ճապոնիան և Թուրքիան այլևս չհամարձակվեցին պատերազմ սկսել Սովետական Միության դեմ։

Հսկայական է Ստալինգրադի ճակատամարտում Սովետական Միության, նրա զինված ուժերի հաղթանակի համաշխարհային պատմական նշանակությունը։ Այդ ճակատամարտի օրերին և նրան հաջորդող առաջին ամիսներին կարմիր բանակը նոր հաջողությունների հասավ։ Իրականացվեց Լենինգրադի բլոկադայի ճեղքումը (1943 թ. հունվար), աղատագրվեց Հյուսիսային Կովկասը։ Նոր հաջողություններ ձեռք բերվեցին մյուս ռազմաճակատներում։ Սկսվեց ֆաշիստական Գերմանիայի և նրա սատելիտների զորքերի մասսայական վռնդումը սովետական երկրից։

Երկրորդ ռազմաճակատը դեռ չէր բացվել։ Սակայն իրականում պատերազմի բախտը որոշվում էր սովետա-գերմանական ռազմաճակատում, ուր ծավալվում էին հսկայական պատերազմական գործողություններ։ Այդ հարկադրված էին խոստովանել նաև բուրժուական մի շարք ղեկավար գործիչներ։ Այսպես, դեռևս 1942 թ. մեր երկրի համար ծանր օրերին, ԱՄՆ-ի պրեզիդենտ Ֆ. Ռուզվելտը ասել է. «Մեծ ստրատեգիայի սեսակետից պարզ է հասարակ փաստը— ռուսները (այսինքն՝ կարմիր բանակը— Ա. Հ.) սպանում են հակառակորդի ավելի շատ զինվորներ և ոչնչացնում են նրա ավելի շատ սպառազինություն ու ռազմամթերք, քան Միավորված ազգերի մնացած 25 պետությունները միասին վերցրած»[3]։ Իսկ Անգլիայի պրեմիեր մինիստր Ու. Չերչիլը 1944 թ. օգոստոսին համայնքների պալատում հարկադրված խոստովանեց, որ սովետական բանակը խաղաց գլխավոր դերը և թափեց ֆաշիստական ռազմական մեքենայի փորոտիքը։ 1944 թ. վերջերին Գերագույն գլխավոր հրամանատար Ի. Վ. Ստալինին Չերչիլը գրում էր. «Մենք հիացած ենք ձեր փառապանծ հաղթանակներով ընդհանուր թշնամու նկատմամբ և հզոր ուժերով, որ դուք հանեցիք նրա դեմ»[4]։

Սակայն թշնամին, մոբիլիզացնելով իր և դաշնակիցների բոլոր մարդկային ուժերն ու նյութական հնարավորությունները, նոր մեծ հարձակում էր նախապատրաստում Սովետական Միության վրա։ Դեռ հույսը չէր կտրել պատերազմը շահելուց։ Այդպիսին էր 1943 թ. հուլիսի սկզբին սկսած հարձակումը Կուրսկի ելուստում։ Արևելյան ռազմաճակատում ունեցած 222 դիվիզիայից այստեղ նա կենտրոնացրել էր ավելի քան 65 դիվիզիա, որից 17-ը տանկային էին և 3-ը՝ մեքենայացված։ Զորքերի թիվը 430 հազարից ավելի էր։

Թշնամու այս խոշոր խմբավորման դեմ կանգնած էին մեր Կենտրոնական և Վորոնեժի ռազմաճակատների զորքերը, որոնք նախօրոք կռահել էին թշնամու ստադրությունը և պատրաստվել ուժգին հակահարվածի։ Առաջին իսկ օրերին կանգնեցնելով թշնամու մասնակի առաջխաղացումը, շուտով մեր զորքերն անցնում են հակահարձակման։ Ամբողջ երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության մեջ այստեղ տեղի է ունենում ամենախոշոր տանկային պատերազմը, խոշորագույն ճակատամարտերից մեկը։ Հաղթող է դուրս գալիս հերոսական կարմիր բանակը։ Ջախջախիչ հարվածներ ստանալով, ֆաշիստական զորքերը ետ են նահանջում։ Շարունակելով հարձակումը, որը ծավալվում էր նաև մյուս ռազմաճակատներում, մեր զորքերը նույն թվականի աշնանը ազատագրում են Ձախափնյա Ուկրաինան, Դնեպրի աջ ափին գրավում բազմաթիվ

---

[3] Вторая мировая война и современность. М., 1972, с. 13.

[4] Переписка председателя Совета Министров СССР... Т. I, М., 1957, с. 306.

հենակետեր, ազատագրում Կիևը։ Կարմիր բանակը աղատագրում է նաև Թաման թերակղզին և մի շարք այլ տերիտորիաներ։

Կուրսկի ճակատամարտում մեր զորքերի հաղթանակով ավարտվեց արմատական բեկման շրջանը Հայրենական մեծ պատերազմում և ամբողջ երկրորդ համաշխարհային պատերազմում։ Սկսվեց մի նոր փուլ, երբ ստրատեգիական ամբողջ նախաձեռնությունը գտնվում էր կարմիր բանակի ձեռքում, որը հասցրնելու էր ֆաշիստական Գերմանիայի ու նրա սատելիտների լիակատար ջախջախմանը։

Հայտնի է, որ, եթե Սովետական Միության նպատակն էր ֆաշիստական բլոկի վերջնական ջախջախումը, ապա Անգլիայի և Ամերիկայի Միացյալ Նահանգների ղեկավարներն այդպիսի խնդիր չէին դնում իրենց առջև։ Նրանք ձգտում էին պատերազմում Սովետական Միության միջոցով թուլացնել Գերմանիան, երկրորդ ճակատի ձգձգումով թուլացնել նաև Սովետական Միությունը և այդ բոլորից հետո թելադրել իրենց կամքը։ Սակայն նրանց ծրագրերը ձախողվեցին։ Ըստ այդ երկրների ղեկավարող շրջանների հավաստիացումների, ֆաշիստական Գերմանիայի դեմ երկրորդ ճակատի բացումը պետք է տեղի ունենար 1942 թ. ընթացքում։ Սակայն այն տեղի չունեցավ նաև 1943 թ.։

Այդ տարվա վերջին Թեհրանում դումարվեց Սովետական Միության, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների ղեկավարների կոնֆերանսը, ուր մշակվեց այդ երեք երկրների կառավարությունների ընդհանուր գիծը պատերազմում և նրանից հետո։ Հակառակ Անգլիայի պրեմիեր մինիստր Չերչիլի ուժեղ դիմադրության, կոնֆերանսի ընդունած դեկլարացիայում հաստատվեց, որ երկրորդ ռազմաճակատը պետք է բացվի 1944 թ. մայիսի 1-ից ոչ ուշ։

1944 թ. սկզբին Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատներում պատերազմական գործողությունները շարունակվում էին դեռևս առանց երկրորդ ռազմաճակատի։ Կոտրելով թշնամու կատաղի դիմադրությունը, մարդկային ու ռազմական տեխնիկայի մեծ կորուստներ հասցնելով նրան, կարմիր բանակը շարունակում էր իր հաղթարշավը դեպի արևմուտք։ Մինչև 1944 թ. ամառվա կեսերը մեր զորքերը ազատագրել էին թշնամու օկուպացրած սովետական տերիտորիայի մոտ երեք քառորդը, նրան դուրս էին վռնդել Ղրիմից և Օդեսայից, դեռևս մարտին հասել Ռումինիայի սահմանին, դուրս էին եկել Բալկանների մատույցները։ Գերմանիայի սատելիտների շրջանում ուժեղ խուճապ էր առաջացել։ Շուտով նրանք մեկը մյուսի ետևից շարքից դուրս եկան։ Սկսվեց ֆաշիստական բլոկի արագ քայքայումը։

Հյուսիսից մինչև հարավ, բոլոր ռազմաճակատներում կարմիր բանակի ծավալուն հարձակողական գործողությունները և ձեռք բերած նորանոր հաջողությունները փայլուն կերպով ցույց տվեցին, որ Սովետական Միությունը ամբողջ պատերազմի դժվարությունները տարավ իր ուսերի վրա։

Ամերիկայի Միացյալ Նահանգների և Անգլիայի կառավարությունները երկրորդ ճակատը բացեցին երկու տարի ուշացումով, 1944 թ. հունիսի 6-ին, երբ նրանք դեսանտային զորքեր ափ իջեցրին Ֆրանսիայի հյուսիսում։ Եվ չնայած դրան, սովետա-գերմանական ռազմաճակատը մնում էր ամենագլխավորը։ Իրականում պատերազմի բախտը որոշվում էր այստեղ։ Ահա թե ինչու ֆաշիստական հրամանատարությունն այս ճակատում էր կենտրոնացրել 235 դիվիզիա՝ 174,5-ը գերմանական, իսկ 60,5-ը՝ նրա վասալների (մինչդեռ պատերազմի սկզբում կար 190 դիվիզիա)։ Իսկ երկրորդ ռազմաճակատում ֆաշիստները պահում էին միայն 135,5 դիվիզիա, ըստ որում ավելի թույլ դիվիզիաներ, քան արևելյան ռազմաճակատում եղածները։

Իր ծավալով և ձեռք բերած հաջողություններով վիթխարի էր 1944 թ. ամառային հարձակումը, երբ կարմիր բանակը, ջախջախիչ հարվածներ հասցրնելով ֆաշիստական զորքերին, նրանց քշեց դեպի արևմուտք և Բարենցի ծովից մինչև Սև ծովը վերականգնեց Սովետական Միության պետական սահմանը։ Այդ ժամանակվա ամենախոշոր ճակատամարտերից մեկը հանդիսացավ Բելոռուսական օպերացիան։ Կարմիր բանակը ոչնչացրեց և գերեց կես միլիո-

նից ավելի ֆաշիստական զինվոր ու սպա, հսկայական քանակությամբ ռազմական տեխնիկա։

Կարմիր բանակը շարունակում էր իր հաղթական արշավը դեպի արևմուտք։ Նա գնում էր որպես ազատարար՝ եղբայրական օգնության ձեռք մեկնելու ֆաշիստական ծանր լծի տակ հեծող ժողովուրդներին, նրանց ազատագրական պայքարին։ Ինչպես նշվեց, դեռևս 1944 թ. մարտին մեր զորքերը մտել էին Ռումինիա։ Հուլիսին նրանք արդեն Լեհաստանում էին։ Կարմիր բանակի հետ միասին թշնամու դեմ կռվում էին լեհական զորքերը, չեխոսլովակյան կորպուսը, զգալի թվով հարավսլավացիներ, բուլղարներ, հունգարներ և այլ ժողովուրդների զավակներ։ Այդ և մյուս երկրներում ազատագրական պայքարի գլուխ էին կանգնած կոմունիստական կուսակցությունները և մյուս առաջադիմական ուժերը։ Նրանց զգալի օգնություն ցույց տվեցին նաև սովետական ռազմագերիները, որոնք որպես պարտիզաններ մասնակցում էին թշնամու դեմ մղվող պայքարին։

Ֆաշիստական Գերմանիայի դեմ մղված պատերազմում կարմիր բանակի ձեռք բերած պատմական հաջողությունների և եղբայրական օգնության շնորհիվ Արևելյան Եվրոպայում՝ Ռումինիայում, Բուլղարիայում, Լեհաստանում, Հունգարիայում, Չեխոսլովակիայում, Ալբանիայում հաստատվեցին ժողովրդա-դեմոկրատական կարգեր, որոնք հետագայում վերածվեցին սոցիալիստականի։ 1949 թ. ձևավորվեց Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը։ Հետագայում, Ճապոնիայի դեմ տարած հաղթանակից հետո ժողովրդա-դեմոկրատական կարգեր ստեղծվեցին նաև Ասիայի մի շարք երկրներում։

1945 թ. սկզբին սովետական ժողովրդի Հայրենական պատերազմը մոտենում էր իր ավարտին։ Կարմիր բանակի Գերագույն գլխավոր հրամանատարությունը մշակել էր ֆաշիստական պետության ու բանակի վերջնական ջախջախման պլանը, որի իրագործումը պետք է սկսվեր այդ թվականի հունվարի վերջերին։ Բայց այն սկսվեց ավելի վաղ, քանի որ ֆաշիստական բանակը Արևմտյան ճակատում հարձակման էր անցել և այնտեղ ծանր վիճակ ստեղծել մեր դաշնակիցների՝ ԱՄՆ-ի և Անգլիայի զորքերի համար։ Չերչիլի խնդրանքով ՍՍՀՄ-ն կատարեց իր դաշնակցային պարտքը և կրճատեց հարձակման ժամկետը։

Հունվարի 12-ին, 1200 կիլոմետր ճակատով՝ Բալթիկ ծովից մինչև Կարպատները, կարմիր բանակն սկսեց իր վիթխարի ու վճռական հարձակումը ֆաշիստական բանակի վրա։ Փետրվարի սկզբներին մեր զորքերը հասել էին Օդերին, հենակետեր գրավել նրա ձախ ափին։ Պատերազմական գործողությունները գնում էին թշնամու տերիտորիայի վրա, Բեռլինից մոտ 70 կիլոմետր հեռու։ Կարճատև կանգ առնելով, մեր բանակը նախապատրաստվում էր Բեռլինի գրոհին։

Այդ օրերին՝ 1945 թ. փետրվարին Ղրիմում (Յալթա) գումարվեց ՍՍՀՄ-ի, ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների ղեկավարների կոնֆերանսը, ուր մշակվեցին ֆաշիստական Գերմանիայի վերջնական ջախջախիչ պլանը, նրա անվերապահ կապիտուլյացիայի պայմանները։ Դրվեց Միավորված ազգերի կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտությունը։ Բայց Չերչիլը այստեղ ևս բացահայտեց իր ռեակցիոն դեմքը։ Հակառակ պայմանավորվածության, նա ճիգեր չէր խնայում, որ առաջինը իրենց զորքերը մտնեն Բեռլին, Պրագա և Վիեննա։

Ապրիլի 16-ին կարմիր բանակը սկսեց իր սրընթաց հարձակումը։ Կոտրելով թշնամու վերջին կատաղի դիմադրությունը, մեր զորքերը արդեն մի քանի օր հետո Բեռլինի մատույցներում էին, իսկ ապրիլի 25-ին առաջին բելոռուսական և առաջին ուկրաինական ռազմաճակատների բանակները, Սովետական Միության մարշալներ Գ. Կ. Ժուկովի և Ի. Ս. Կոնևի հրամանատարությամբ Բեռլինի արևմուտքում միացան իրար։ Ֆաշիստական որջը շրջապատման մեջ առնվեց։ Սկսվեցին փողոցային մարտերը քաղաքում։ Այլևս ոչ մի ուժ չէր կարող փրկել ֆաշիստական բանակը սովետական զինված ուժերի հարվածներից։

Ծանր զոհերի գնով հաղթահարելով հակառակորդի դիմադրությունը և առաջ շարժվելով դեպի քաղաքի կենտրոնը, մեր զորամասերի մի խումբ ապրիլի 30-ին հասնում է Ռայխստագի շենքին, ուր ամենակատաղի մարտեր են ծավալվում։ Մայիսի 1-ին Ռայխստագի շենքի վրա ծածանվում է հաղթանակի կարմիր դրոշը։ Այն բարձրացրել էին քաջարի ռազմիկներ Մ. Ա. Եգորովը և Մ. Վ. Ղանթարիան։

Մայիսի 2-ին Բեռլինի ջախջախված մեկ միլիոնանոց կայազորի մնացորդները զերի հանձնվեցին, իսկ 6 օր հետո, մայիսի 8-ին ֆաշիստական Գերմանիայի պատվիրակությունը ստորագրեց անվերապահ կապիտուլյացիայի փաստաթուղթը։

Կործանվեցին Գերմանիայի ֆաշիստական պետությունը և բանակը, որոնք մարդկությանը, մասնավորապես Սովետական Միությանը հսկայական մարդկային ու նյութական վնասներ հասցրին։ Պատերազմում մեր երկրի ունեցած մարդկային զոհերի թիվը կազմում է 20 միլիոն, որից 10 միլիոնը՝ մահվան ճամբարներում զոհված խաղաղ բնակչություն և ռազմագերիներ։ Ֆաշիստների կողմից Սովետական Միությանը պատճառած նյութական վնասները կազմում են 670 միլիարդ ռուբլի, իսկ պատերազմական բոլոր ծախսերի հետ միասին այն հասնում է 2 տրիլիոն 600 միլիարդ ռուբլու։

Հայրենական մեծ պատերազմն ավարտվեց Սովետական Միության և դաշնակիցների հաղթանակով, որի համաշխարհային-պատմական նշանակությունը դժվար է գերագնահատել։ Բայց երկրորդ համաշխարհային պատերազմը դեռ չէր ավարտվել։ Այն շարունակվում էր խաղաղ օվկիանոսում։ Քանի որ Հայրենական պատերազմի ժամանակ ճապոնական միլիտարիստները խախտում էին ՍՍՀՄ-ի հետ կնքած չեզոքության պայմանագիրը և քանի որ նա պատերազմի մեջ էր գտնվում ԱՄՆ-ի հետ, վերջինիս օգնելու համար Սովետական Միությունը պատերազմի մեջ մտավ Ճապոնիայի դեմ։

Դեռևս 1945 թ. ապրիլի 5-ին ՍՍՀՄ-ն չեղյալ էր հայտարարել Ճապոնիայի հետ կնքված չհարձակվելու պայմանագիրը և օգոստոսի 8-ին պատերազմ հայտարարեց Ճապոնիային։ Կարմիր բանակի զորքերը հարձակում սկսեցին Մանջուրիայում մեր սահմանների մոտ կենտրոնացած ճապոնական Կվանտունյան բանակի վրա։ Այդ հզոր հարձակումը ավարտվեց սեպտեմբերի 2-ին, երբ գլխովին ջախջախված բանակը դադարեցրեց դիմադրությունը և գերի հանձնվեց։ Օգոստոսի 6-ին և 9-ին ամերիկյան ավիացիան ատոմային ռումբեր նետեց Ճապոնիայի Հիրոսիմա և Նագասակի քաղաքների վրա. սեպտեմբերի 2-ին ստորագրած պայմանագրով միլիտարիստական Ճապոնիան իրեն պարտված ճանաչեց։

Պատմական վիթխարի հաղթանակով ավարտվեց Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը։ Ավարտվեց նաև երկրորդ համաշխարհային պատերազմը։ Վրա հասավ աշխարհի ժողովուրդների երկար ժամանակ սպասած խաղաղության ժամանակաշրջանը։

Այդ հաղթանակի գործում վճռական դերը պատկանում է Սովետական Միությանը, նրա հերոսական կարմիր բանակին ու ամբողջ ժողովրդին։ Դա Սովետական Միության ռազմական, քաղաքական, գաղափարական ու տնտեսական հաղթանակն էր իմպերիալիզմի ռեակցիոն ուժերի, առաջին հերթին նրա հարվածային բռունցքի՝ գերմանական ֆաշիզմի ու ճապոնական միլիտարիզմի դեմ։

Դեռ 1919 թ., խոսելով սովետական ժողովրդի անպարտելիության մասին, Վ. Ի. Լենինը գրել է. «Երբեք չեն հաղթի այն ժողովրդին, որի մեջ բանվորներն ու գյուղացիները իրենց մեծամասնությամբ իմացել, զգացել և տեսել են, որ իրենք պաշտպանում են իրենց, սովետական իշխանությունը՝ աշխատավորների իշխանությունը, որ պաշտպանում են այն գործը, որի հաղթանակը իրենց և իրենց զավակների համար կապահովի կուլտուրայի բոլոր բարիքներից, մարդկային աշխատանքի բոլոր ստեղծագործություններից օգտվելու հնարավորություն»[5]։

[5] Վ. Ի. Լենին. Երկերի լիակատար ժողովածու. հ. 38, Երևան, 1982, էջ 392։

Մեր մեծ հաղթանակը սոցիալիստական կարգերի կատաղի թշնամիների դեմ օրինաչափ երևույթ էր։ Նա ուներ իր կարևորագույն աղբյուրները և նպաստող գործոնները։ Կոմունիստական կուսակցության լենինյան քաղաքականության կենսագործման շնորհիվ բուռն զարգացում էր ապրել Սովետական Միության, նրա մեջ ընդգրկված բոլոր ազգերի ու ժողովուրդների էկոնոմիկան, կուլտուրան և ամբողջ կյանքը։ Իրականացվել էր երկրի ինդուստրացումը և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ Վերացվել էին շահագործող դասակարգերը։ Ամրապնդվել էր բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության եղբայրական դաշինքը։ Մեծ չափով աճել էր նրանց միջնաշերտ մտավորականությունը։ Ավելի ու ավելի ամրապնդվել էր սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների եղբայրական դաշինքը։ Լայն ծավալ էր ընդունել սովետական հայրենասիրությունը թե՛ ռազմաճակատում և թե՛ թիկունքում։

Կարմիր բանակի ռազմիկները թշնամու դեմ մղած դժվարին մարտերում ցուցաբերում էին մասսայական հերոսության օրինակներ։ Պատերազմի ժամանակ կառավարական շքանշաններով պարգևատրվել են 5300 հազար ռազմիկ, մեդալներով՝ 1700 հազար։ Սովետական Միության հերոսի բարձր կոչման են արժանացել մոտ 12000 ռազմիկ, որից ռուս՝ 8160, ուկրաինացի՝ 2068, բելոռուս՝ 309, թաթար՝ 161, հրեա՝ 108, հայ և հայաստանցի՝ 108, դաղախ՝ 96, վրացի՝ 90, ուզբեկ՝ 69 և այլն։ Սովետական թիկունքը պատերազմի ժամանակ տվել է. ինքնաթիռ՝ 137 հազար հատ, տանկ՝ 104 հազար, տարբեր տրամաչափի հրանոթ՝ 488 հազար[6]։ Թիկունքի միլիոնավոր աշխատավորներ հայրենանվեր աշխատանքի համար պարգևատրվել են կառավարական շքանշաններով և մեդալներով։ Բազմաթիվ աշխատավորներ արժանացել են Սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչման։ Թշնամուն ուժգին հարվածներ էին հասցնում նրա զավթած տերիտորիայում մնացած սովետական մարդիկ՝ ընդհատակյայինները և պարտիզանները, որոնք ոչնչացնում էին նրա զինվորներին, ռազմական պահեստները, քանդում ու պայթեցնում կամուրջները, երկաթուղային և խճուղային ճանապարհների կարևոր հանգույցները։ 1943 թ. Բելոռուսիայում կար 245 հազար, Ուկրաինայում՝ 220 հազար պարտիզան։ Հարյուր հազարավոր պարտիզաններ և ընդհատակյայիններ գործում էին ՌՍՖՍՀ օկուպացված մարզերում։ Պատերազմի ընթացքում պարտիզանները և ընդհատակյայինները «ոչնչացրել, վիրավորել և գերի են վերցրել մեկուկես միլիոն հիտլերյան զինվոր ու սպա, օկուպացիոն ապարատի պաշտոնյաներ ու նրանց աջակիցներ՝ դավաճանների թվից։ Նրանք խորտակել են թշնամու ավելի քան 18 հազար գնացք»[7]։

Հայրենական մեծ պատերազմում Սովետական Միության պատմական հաղթանակի կազմակերպիչն ու ոգեշնչողը հանդիսացավ մեծ Լենինի ստեղծած փառապանծ կոմունիստական կուսակցությունը։ Պատերազմի առաջին իսկ օրերից նա հստակ ծրագիր մշակեց մեր երկրի վրա հարձակված դաժան թշնամուն վճռական կերպով դիմադրելու և ջախջախելու, հաղթանակի հասնելու համար։

Չնայած ֆաշիզմի դեմ մղած 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի տարած համաշխարհային պատմական հաղթանակից անցել է արդեն 40 տարի, բայց աշխարհում խաղաղությունը դեռ չի ապահովված։ Իմպերիալիզմի ռեակցիոն ուժերը, մասնավորապես ԱՄՆ-ի իմպերիալիստները և նրանց դաշնակիցները, իրենց հակաժողովրդական քաղաքականությամբ շարունակում են աշխարհը պահել լարվածության մեջ, նրան կանգնեցնել ատոմային պատերազմի ահռելի վտանգի առջև։ Աշխարհի մարդկությունը, ամբողջ սոցիալիստական համագործակցությունը, Սովետական Միության գլխավորությամբ, ծավալուն պայքար է տանում ռեակցիոն ուժերի դեմ՝ հանուն խաղաղության։

---

[6] История КПСС. Т. 5, кн. I, М., 1970, с. 644.

[7] История Великой Отечественной войны Советского Союза. 1941—1945. Т. VI, М., 1965, с. 281.